Հավելված
ՀՀ կառավարության 2015 թվականի
դեկտեմբերի 24-ի N 1526 - Ն որոշման

| Գործողությունը | Նպատակը/ ակնկալվող արդյունքը | Պատասխանատու լիազոր մարմինը (մարմինները) | Կատարման ժամկետը | Փոփոխության/ ընդունման կարիք ունեցող իրավական ակտը |
|---|---|---|---|---|
| 1.19. Օրենքի 23-րդ հոդվածի «ժա» կետում «քաղաքական» բառի չնախատեսում | տերմինների միասնության ապահովումը՝ ապաստան հայցողներին միայն քաղաքական հիմքով չառանձնացնելու ու խտրական վերաբերմունք չդրսևորելու նպատակով | ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն<br><br>ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության միգրացիոն պետական ծառայություն | 2015 թ. | այլ իրավական ակտեր, որտեղ ապաստանի տրամադրումը սահմանափակված է միայն «քաղաքական» տարատեսակով |
| 1.20. Օրենքի 29-րդ հոդվածի վերանայում՝ բովանդակային առումով դրանում նախատե-սելով անօրինական միգրացիայի դեմ պայքարի ընդհանուր դրույթ-ներ կամ ուղղություններ, իսկ հոդվածի բովանդակությունը ներկայացնել որպես գործատուի՝ | օրենքի 29-րդ հոդվածի վերնագրի և բովանդակության համապատասխանեցումը | ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն<br><br>ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների | 2015 թ. | Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրք կամ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք |

| | | | | |
|---|---|---|---|---|
| իր կողմից ստանձնված պար-տականությունները չկատարելու կամ պատշաճ չկատարելու դեպքում պատասխանա-տվության նախատեսում | | նախարարության միգրացիոն պետական ծառայություն<br><br>ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն | | |
| 1.21. Օրենքի 6-րդ գլխի վերնագրի վերանայում | կիրառվող տերմինների հստակեցումը | ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն<br><br>ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության միգրացիոն պետական ծառայություն | 2015 թ. | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ